ծագել է ոչ այնքան ազգատման հեռանկրով, որքան բառի բարբառային ձևի ազդեցությամբ։ Բառի հիշատ ձևն է գրա. «Բաց սամկական զոգ. Ուսս. Քմբուկ մեծ, կամ միանգամեան»։ Ակնհայտ է, որ զոգ ձևից կարող էր ծագել զուգ և՝ հակասակը։ Այստեղ խոսքը Քմբուկի՝ գոփի մասին է, որը նվաղելով պարել է Հերոդիադացու։

Դենկի բառը հիշատ բացատրված է՝ դանկ-դենկ, գրամ. ընդունելի չէ. սակայն, «բուրգ և դենկի-դենգի» զուգահեռ։

Այս և նման վրիպումները ոչ միայն չեն նսեմացնում Ա. Մնացականյանի սովորածավալ ուսումնասիրության գիտական բարձր արժեքը, այլն թեչ-որ չափով, նույնիսկ անխուսափելի են։ Գիրքը նոր և մնայուն ավանդ է հայ բանասիրության մեջ։

ԱՐՇԱՎԻՐ ՂԱԶԻՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

Հ. Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ. Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի XIII դարի պատմության մի քանի հարցեր. Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1980, 255 էջ։

IX—XIII դդ. Հայաստանի և Վրաստանի սոցիալ-տնտեսական և բաղաքական պատմության սպառիչ ուսումնասիրությունն անհնարին է, առանց այդ շրջանի հայ-վրացական բազմարնույթ առնչությունների հաշվառման և համակողմանի ուսումնասիրության։ Դա մի ժամանակաշրջան էր, երբ, քաջ գիտակցելով, որ օտար նվաճողների դեմ պայքարի հաջողության երաշխիքը եղբայրական դաշինքն է, դրացի երկու ժողովուրդները սկզբում հայ Բագրատունիների, ապա իրենց վերջիններիս ժառանգորդը համարող վրաց Բագրատունիների գլխավորությամբ թոթափեցին արաբական և ապա թուրք սելջուկյան լուծը (Հարավային Հայաստանն այդպես էլ մնաց սելջուկների տիրապետության տակ)։ Հերոսական մաքառումներով լի այդ ժամանակաշրջանում հարևան երկու ժողովուրդների միջնադարի կապերն առավել սերտ ու բազմաբնույթ դարձան։ Եվ օրինաչափ է, որ կովկասագիտությունն իր արշալույսից սկսած խնդրո առարկա ժամանակաշրջանի տարբեր փուլերի հայ-վրացական հարաբերությունների քննությանը մեծ տեղ է հատկացնում՝ տարեցտարի հարստանալով դրանց այս կամ այն բնագավառին նվիրված հետազոտություններով։ Այդ ուսումնասիրություններից է նաև գրախոսվող մենագրությունը, որը նվիրված է նշված ժամանակաշրջանի կարևոր փուլերից մեկի՝ XII դ. 20—70-ական թվականների հայոց և վրաց պատմության այն հարցերին, որոնց սերտ կապվածությունը թելադրում է դրանց համատեղ քննության անհրաժեշտությունը։

Հեղինակին, ամբողջությամբ վերցրած, հաջողվել է հասնել իր առջև դրված խնդիրների կատարմանը, և նա բազմաթիվ ու տարաբնույթ աղբյուրների համադիր ուսումնասիրության և խնդրո առարկա հարցերին առնչվող գրականության օգտագործման ճանապարհով ընթերցողի դատին է հանձնել մի շահեկան աշխատություն։

Գրախոսվող աշխատությունը բաղկացած է խիստ հակիրճ (մոտ 3 էջ) առաջաբանից (որին, թերևս, կպատշաճեր «Երկու խոսք» խորագիրը), աղբյուրների և գրականության ավելի քան ընդարձակ տեսությունից, երեք գլխից և սեղմ (մոտ 2 էջ) վերջաբանից։ Այն նաև օժտված է ուսերեն ամփոփումով և ամեն մի գիտական հրատարակությանն այնքան անհրաժեշտ օգտագործված աղբյուրների և գրականության, անձնանունների ու տեղանունների ցանկերով։ Ցանկալի կլիներ, եթե գիրքն ունենար նաև համապատասխան քարտեզ։

Հանգամանորեն վերլուծելով ու արժեքավորելով իր օգտագործած աղբյուրներն ու գրականությունը և, մասնավորապես, իրավացիորեն շեշտելով հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության գործում «Քարթլիս ցխովրեբայի» մեծ կարևորությունը, նրանից Լ. Մելիքսեթ-Բեկի կատարած հատվածաբար թարգմանություններն ըստ ամենայնի գնահատելով հանդերձ, հեղինակը միանգամայն ճիշտ ու ժամանակին նկատում է, որ «արդեն զգացվում է «Քարթլիս ցխովրեբայի» լրիվ հայերեն թարգմանության անհրաժեշտությունը՝ վրացագիտության վերջին նվաճումները և նորագույն ուսումնասիրությունները հաշվի առնելով» (էջ 30)։ Օգտագործած գրականության տեսությունից Հ. Մարգարյանը եզրահանգել է, որ «չնայած այսօր հրա-

---

5 «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. Ա, Վենետիկ, 1749, էջ 573։

պարակի վրա եղած բազմաթիվ ուսումնասիրություններին, ԺԲ դարի 20—70-ական թվականների համեմատաբար սակավ ուսումնասիրված ժամանակահատվածը դեռևս կարիք է զգում մենագրական հետազոտության...» (էջ 44)։ Մենք կասեինք մենագրական հետազոտությունների, հատկապես այդ շրջանի Հյուսիսային Հայաստանի ու Վրաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների և հայ-վրացական հոգևոր ու մշակութային փոխառնչությունների ավելի խոր ու բազմակողմանի ուսումնասիրության առումով։

Դրախոսվող աշխատության առաջին գլխում, որը վերնագրված է «Հյուսիսային Հայաստան և Վրաստան ԺԲ դարի երկրորդ քառորդում», քննվում է երկու կարևոր հարց. քաղաքական կացությունը Հայաստանում և Վրաստանում XII դ. 20-ական թվականներին և Վրաստանի պայքարը թուրք սելջուկյան ամիրայությունների դեմ՝ դարի երկրորդ քառորդում։ Այստեղ հեղինակը վերլուծում է XI դ. վերջին—XII դ. սկզբին Վրաստանի վերամիավորման ուղղությամբ Դավիթ Շինարարի և Դեմետրե I-ի ձեռնարկած քայլերը, նրանց ներքին ու արտաքին քաղաքականությունը, շրջակա թուրք սելջուկյան ամիրայություններում տիրող վիճակը և շարադրում վրացական պետության ու վերջիններիս միջև ծայր առած համառ պայքարի առաջին փուլի պատմության առավել կարևոր դրվագները։

Աղբյուրագիտական պատշաճ պատրաստվածությունը Հ. Մարգարյանին հնարավորություն է տվել սկզբնաղբյուրների մանրազնին քննության հենքի վրա նոր լույս սփռել խնդրո առարկա այս կամ այն հարցի վրա, վիճարկել կամ ճշտել դրանց մի մասի շուրջ մասնագիտական գրականության մեջ եղած կարծիքները, կամ էլ զարգացնել որոշ տեսակետներ՝ գիտական շրջանառության մեջ դնելով համապատասխան կռվաններ։ Հատկապես շահեկան են նաև այն սրբագրումները, որ հեղինակը կատարել է այդ ժամանակաշրջանի մի քանի իրադարձությունների ժամանակագրության ճշգրտման, ինչպես նաև դրանց որոշ ակտիվ մասնակիցների ինքնությունը պարզելու գործում։

Վերլուծելով XI դ. վերջին—XII դ. առաջին քառորդում Անդրկովկասում տիրող վիճակը, Հ. Մարգարյանը հանգել է այն ճիշտ դրույթին, որ Վրաստանը XII դ. երկրորդ քառորդն էր թևակոխում իբրև բարգավաճող մի պետություն, որը հաջողությամբ իր վրա էր վերցրել վրաց և հայ ժողովուրդների հակասելջուկյան պայքարը համախմբողի ու գլխավորողի դերը։ Ցանկալի էր, սակայն, որ հեղինակն ըստ ամենայնի բացահայտեր այդ պայքարի ամենակարևոր ազդակը։ Դա թուրք սելջուկների պարտադրած՝ ցածր կացութաձևի վրա խարսխված տնտեսական, քաղաքական և մշակութային խորթ ու հետամնաց ձևերից ձերբազատվելու հայ և վրաց ժողովուրդների օրինաչափ ձգտումն էր։ Հենց դրանով էր պայմանավորված այն ակտիվ մասնակցությունը, որ ցուցաբերում էին հայ ժողովրդի բոլոր խավերը՝ վրաց Բագրատունիների հակասելջուկյան ձեռնարկումներում։

Աշխատության այս գլուխն անհամեմատ կշռեր, եթե հեղինակը շահեկանափակվեր Տաշիր-Զորագետի հայկական Կյուրիկյան թագավորության նկատմամբ Դավիթ Շինարարի վարած ակտիվ քաղաքականության լոկ թռուցիկ արձանագրմամբ։ Կարծում ենք, որ այդ քաղաքականության մանրակրկիտ քննությունը և ըստ արժանվույն գնահատությունը պետք է լիներ աշխատության այս գլխի հիմնական խնդիրներից մեկը, անկախ գրքի վերնագրում արված «մի քանի հարցերը» վերապահությունից։ Դա բացատրվում է նրանով, որ այդ հարցի ըստ ամենայնի և անկողմնակալ լուսաբանումը (որը ցարդ չի կատարվել) հսկայական նշանակություն ունի թե՛ XII դ.—XIII դ. սկզբի հայ-վրացական հարաբերությունները, և թե՛ այդ ժամանակաշրջանի վրացական պետության պատմության որոշ խիստ կարևոր իրադարձություններ ճիշտ ընկալելու- ու անհրաժեշտ դիտական խորությամբ մեկնաբանելու համար։

Դրախոսվող աշխատության երկրորդ գլխի համար թեմա է ծառայել հայոց քաղաքամայր Անիին տիրելու նպատակով XII դ. 20—70-ական թվականներին Վրաստանի և Հայաստանում բուն դրած թուրք սելջուկյան բազմաթիվ ամիրայությունների միջև մղված համառ պայքարի պատմությունը։ Ընդ որում, հեղինակը գտնում է, որ «Բագրատունիների երբեմնի մայրաքաղաքը հիշյալ ժամանակաշրջանում այն մարտարեմն էր, որտեղ պայքարող ուժերի կոփի ելքից էր կախված ոչ միայն բուն քաղաքի, այլև մերձակա Արագածոտնի և Արարատյան դաշտի ճակատագիրը» (էջ 81)։ Այս դրույթի իրավացիությունը չվիճարկելով հանդերձ, նկատենք, որ Անիի գրավմամբ վրացական պետությունն առաջին հերթին նպատակ էր հետապնդում ամրապնդել բուն Վրաստանի անվտանգությունը։

Մենագրության այս գլուխը շարադրելիս ևս հեղինակը նշանակալից աղբյուրագիտական աշխատանք է կատարել, որը նրան հնարավորություն է տվել մանրազնին հետազոտել Անիի

համար մղված պայքարի առանձին դրվագները. պարզել այդ իրադարձությունների մասնակիցների ինքնության և գործունեության հետ կապված բազմաթիվ կնճռոտ հարցեր. հասնել այս կամ այն եզրության անխոցելի թվագրմանը։ Այսպես, օրինակ, Հ. Մարգարյանը ճշտել է, որ Անին Շեդադյաններին է վերադարձվել ոչ թե 1165 թ., ինչպես մինչև այժմ ընդունված էր, այլ՝ 1164 թ., և այն էլ ոչ թե Մահմուդի որդի Արսլանին, այլ Շահնշահ Շեդադյանին։ Միանգամայն ընդունելի է նաև հեղինակի այն եզրակացությունը, որ Անին գրավելու նպատակով Կեորգի III-ի ձեռնարկած փորձերի (1161, 1174) ձախողման հիմնական պատճառներն էին Բուրք սելջուկյան ամիրայությունների կատաղի դիմադրությունն ու Գեորգի III-ի տիրապետության վերջին տարիներին Վրաստանում խիստ սրված ներդասակարգային պայքարը (դրա գրսևորումներից էր, մասնավորապես, Անին ի կառավարումն ստացած Իվանե Օրբելու վարքագիծը)։ Անին այդպես էլ մնաց Շեդադյանների տիրապետության տակ. մինչև որ 1199 թ. Զաքարյաններն այն ազատագրեցին, դարձնելով Զաքարե ամիրսպասալարի տիրույթների կենտրոնը։ Այս գլխում հեղինակը հաջողությամբ պարզել է 1161 թ. Գեորգի III-ի գրաված Անին Շեդադյաններին հետ վերադարձնելու նպատակով շրջակա սելջուկյան ամիրայությունների կազմակերպած միացյալ արշավանքի ղեկավարներից երկուսի անձնավորությունը և համապատասխան սրբագրումներ է առաջարկել «Քարթլիս ցիովրեբայի» քննական բնագրում։

Գրախոսվող աշխատության վերջին գլխում, որը նվիրված է XII դ. 20—70-ական թվականների Վրաստանի ու Հյուսիսային Հայաստանի ներքաղաքական կյանքի ու ներդասակարգային պայքարի վերլուծությանը, ուսումնասիրվել են հետևյալ հարցերը. ներդասակարգային պայքարը XII դ. երկրորդ քառորդում և գահակալության հարցը 1150—1156 թթ., 1176—1177 թթ. ավատատիրական ապստամբության նախապատմությունը, նրա սկիզբն ու ընթացքը, պարտության պատճառները, հետևանքներն ու նշանակությունը։

Հեղինակը ճիշտ է, գտնելով, որ Վրաստանի վերամիավորումը տեղի էր ունենում ներդասակարգային բուռն պայքարի պայմաններում, պայքար, որը, ինչպես նկատել է նաև Մ. Լորթքիփանիձեն, այս կամ այն կերպ կապված էր ստրատեգիական խիստ կարևոր նշանակություն ունեցող Հյուսիսային Հայաստանի և նրա կենտրոն Լոռի բերդաքաղաքի (որտեղ սովորաբար տիրույթներ էր ստանում վրացական պետության ամիրսպասալարը), ինչպես նաև Անիի հետ։ Նրանից բխում է, որ XII դ. Վրաստանում ընթացած ներդասակարգային պայքարը զգալի հայագիտական հետաքրքրություն է ներկայացնում, և դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ Հ. Մարգարյանը նրա լուսաբանմանն է հատկացրել գրախոսվող աշխատության գերակա մասը։

Գնահատելի աղբյուրագիտական աշխատանքի հենքի վրա հեղինակը տվել է կենտրոնական իշխանության դեմ XII դ. առաջին կեսին Արծրունիների հզոր իշխանական տոհմի մղած պայքարի, ինչպես նաև Օրբելիների հետ նրանց հակամարտության պատմությունը և ապա անցել պատմական ասպարեզից Արծրունիների հեռանալուց հետո նրանց տեղը գրաված Օրբելիների ու վրաց Բագրատունիների կատաղի բախման մանրակրկիտ քննությանը։ Այդ բախման գագաթնակետը եղավ վրաց ավատատերերի շրջանում «առաջինի» հավակնություններ ցուցաբերող Օրբելիների գլխավորած հզոր ապստամբությունը, որը ցնցեց ողջ Վրաստանն ու Հյուսիսային Հայաստանը։ Օրբելիների «1176—1177 թթ. ապստամբությունը,— նշում է հեղինակը,— պայմանավորված էր ավատատիրական Վրաստանի նախընթաց պատմական զարգացմամբ, այն թագավորական իշխանության և մեծատոհմիկ ազնվականության միջև հարատև պայքարի արդյունք էր» (էջ 149)։ Այլ կերպ ասած, այն օրինաչափ երևույթ էր։

Ապստամբության պատճառների վերլուծությունից հետո Հ. Մարգարյանն անցել է նրա մասնակիցների կազմի, նրանում եղած տարբեր խմբավորումների նպատակների քննությանը։ Ապստամբության հայ իշխանների մասնակցության հարցը վերլուծելիս հեղինակն իրավացիորեն նկատել է, որ «Հյուսիսային Հայաստանի հայ իշխանները Իվանե Օրբելու անջատողական ձգտումների իրականացումը կարող էին ընկալել իբրև Կյուրիկյանների նախկին թագավորության վերականգնում, որը նրանց համար ևս ցանկալի էր» (էջ 157)։ Թթև նկատի ունենալով Օրբելիների և Կյուրիկյանների խնամիական կապերը, այն, որ դրա օգտագործմամբ Օրբելիները ցանկանում էին գրավել վերջիններիս դերը, ինչպես նաև Սանահնում Իվանե Օրբելու թողած արձանագրությունը. «Ես՝ Օրբէլեան Իւանէ սպասալարս... ըստ նախնեաց սովորութեան եկի ուխտ Սանահին... տեսի զյիշատակս նախնեաց մերոց», որը ես տեղական միջավայրի հետ Օրբելիների սերտ կապերի վկայություն է, ապա այս մտահանգումը միանգամայն տրամաբանական է։ Նույնը կարելի է ասել նաև ապստամբության ժամանակ կարևոր դեր խաղացած

Ազարակ և Սախաթ ամրոցների առաջարկված տեղադրության մասին։ Վերջնական է նաև ապստամբության ժամանակագրության սրբագրումը՝ 1176—1177 թթ., որը ևս կատարվել է հմտությամբ և ագրյուրագիտական տեքստի պրպտումների արդյունքի։ Կարծում ենք, որ տարիներ շարունակ արծարծվող այս հարցը ստացել է սպառիչ լուծում։

Ապստամբության ընթացքի բացահայտումից հետո Հ. Մարգարյանն անցել է նրա պարտության պատճառների, հետևանքների ու նշանակության վերլուծությանը։ Սակայն, անդրադառնալով ապստամբության պարտության պատճառներին, հեղինակն ըստ էության շեշտը դնում է միայն ապստամբների գործած տակտիկական սխալների վրա, մինչդեռ դրանք լոկ երկրորդական գործոններ էին։ Բանն այն է, որ լինելով խոշոր ավատատերերի հետադիմական ելույթ, ապստամբությունը բխում էր միայն նրանց (հատկապես Օրբելիների) նեղ դասային շահերից և հասկանալի պատճառներով չէր վայելում երկրի առևտրավաճառականական խավերի (հիշենք թեկուզ նրանց շահերն արտահայտող Ամիր-Քրդի գործուն աջակցությունը Գեորգի III-ին), քաղաքների արհեստավորության (որով, մասնավորապես, պայմանավորված էր Թագավորի՝ Տփխիսում և ոչ թե այլ, ավելի ամուր վայրում ապաստանելը), գյուղացիության և մանր ու միջին ազնվականության (հիշենք թեկուզ մեծ Սարգիս Զաքարյանի հեռանալն Օրբելիներից), այսինքն՝ երկրի բնակչության գերակշիռ մասի համակրանքն ու աջակցությունը։ Ավելին, հակասում էր նրա շահերին, ուստի և երկրի բնակչության մեծ մասը հանգես եկավ ընդդեմ Օրբելիների՝ ի պաշտպանություն կենտրոնական իշխանության։ Հենց դա էր ապստամբության պարտության հիմնական պատճառը, որը պետք է բացահայտվեր ու շեշտվեր անհրաժեշտ խորությամբ ու հստակությամբ։

Հեղինակը, անդրադառնալով Օրբելիների ապստամբության հետևանքներին, իրավացիորեն նկատել է, որ «1176—1177 թթ. իրադարձությունները շրջադարձային փոփոխություններ առաջ բերեցին Հյուսիսային Հայաստանի իշխանական տների կազմում» (էջ 206)։ Դա, կարծում ենք, առաջին հերթին հետևանք էր այն հեռամետ քայլի, որ կատարեց մեծ Սարգիս Զաքարյանը՝ որդու և եղբորորդու հետ ապստամբների շարքերից հեռանալով։ Քանի որ գրքում այս հարցը համապատասխան քննության առարկա չի դարձել, որը խիստ ցանկալի կլիներ, փորձենք գրախոսության սահմաններից ելնելով շարադրել այն դրդապատճառները, որոնցից ելնելով մեծ Սարգիս Զաքարյանը՝ «Օրբելիների եղբայրը և սիրելին» (ինչպես նրան կոչում է վրաց պատմիչը), դիմեց այդ վճռորոշ քայլին, դրանով իսկ դնելով Զաքարյանների իշխանապետության ամուր հիմքերը։ Նրախտաշատ Դ. Հովսեփյանը մեծ Սարգսի այս քայլը դիտել է որպես նրա անձերազ Ամիր-Քրդի ազդեցության հետևանք։ Այդ հանգամանքը չժխտելով հանդերձ, կարծում ենք, որ մեծ Սարգիսն այդ վճռորոշ քայլին դիմելու համար ուներ ավելի հիմնավոր պատճառներ։ Ակնհայտ է, որ նա ապստամբությանը հարել էր հաջողության դեպքում Օրբելիներից նոր կալվածքներ ստանալու ավելի քան համեստ միտումով։ Սակայն դեպքերի զարգացումը հանգեցրեց նրան, որ Օրբելիները փակվեցին Լոռե բերդում։ Հույսերը դնելով խիստ կասկածելի արտաքին օգնության վրա։ Այդ պայմաններում մեծ Սարգիս Զաքարյանի նման խոշոր ռազմական գործիչը չէր կարող չհասկանալ, որ ապստամբությունը դատապարտված է պարտության, իր համար խիստ անցանկալի բոլոր հետևանքներով հանդերձ։ Մյուս կողմից, վարելով շափազանց նպատակասլաց և խելացի տակտիկա, Գեորգի III-ը, անգամ այս իրադարձությունները կողմնակալությամբ մեկնաբանող Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ, ապստամբների շարքերից հեռացողներին «մեծաւ պատուով ընդունէր և անչափ պարգևօք խրախուցուցանէր, և զամենայն հայրենիս և փարամուիինս Օրբէլեանց խոստանայր նոցա»։ Վերոգրյալի հաշվառմամբ եթե նկատի ունենանք, որ ասպարեզից Օրբելիների հեռանալու դեպքում Զաքարյանների համար իրականանալի հնարավորություններ կստեղծվեին իրենց կայուրիկյանների ժառանգորդները համարող Օրբելիների (ինչպիսի հավակնություններ ունեին նաև Զաքարյանները) տեղը գրավելու և նրանց սոսկական վասալը մնալու փոխարեն կհասնեին ավելիին, ապա պարզ կդառնա, թե ինչու մեծ Սարգիսն ի վերջո անցավ Գեորգի III-ի կողմը։

Գրախոսվող գրքում հեղինակը վիճարկում է Օրբելիների ապստամբության ճնշման ժամանակ մեծ դեր խաղացած Ամիր-Քրդի և Արուլհասանի մինչ այժմ ընդունված նույնացումը, այդպես էլ չպարզելով, թե ով էր վերջինս։ Թեև այս հարցը գրքի խնդիրների շրջանակից դուրս է, ցանկալի կլիներ, որ հեղինակն այս ուղղությամբ պրպտումներ շարունակեր և այդ հարցի մեջ հստակություն մտցներ, ինչպես հաջողությամբ բազմիցս կատարել է սույն մե-

նագրության մեջ՝ պարզելով իր հետազոտած պատմական իրադարձությունների երեսի մասնակիցներից շատերի անձնավորությունը։

Ամփոփենք. «Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր» աշխատությամբ Հ. Մարգարյանը գնահատելի աշխատանք է կատարել հայագիտության և վրացագիտության համար երկուստեք կարևորություն ունեցող մի շարք հարցերի ուսումնասիրության շնորհակալ մարզում։ Այս աշխատությունը որոշակի նպաստ կարող է բերել նաև 1180—1230-ական թվականների Վրաստանի և Զաքարյանների իշխանապետության պատմության դեռևս մութ մի շարք երեսներ ու խնդիրներ գիտական խորությամբ հետազոտելու գործում։

ՎԱՀՐԱՄ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու
ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ